Արգավանդ համայնքի 2019թվականի տարեկան հաշվետվություն

2020թ. Փետրվարի 4-ին ժամը 12:00 –ին Արգավանդի մշակույթի տանը կայացավ համայնքի ընդհանուր ժողով,որին մասնակցում էին մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա.Թովմասյանը ,համայնքի 45 անդամներ և ավագանու անդամներ

Նախագահությամբ՝ Ա.Աղաջանյանի

Քարտուղարությամբ՝ Ա. Սարգսյանի

Օրակարգում

2019թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն :

Զեկուցող՝ Ա.Աղաջանյան

Համայնքի ղեկավար Ա.Աղաջանյանը ներկայացրեց 2019թ. տարեկան հաշվետվությունը.
2019թ. տարվա սկզբին սուբվենցիայի ծրագրի շրջանակներում մրցութային կարգով հաղթած շին կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր համայնքապետարանի և հարակից տարածքների շինարարության համար:
2019թ. համայնքի ղեկավարի կողմից ընդունելություն է կազմակերպվել համայնքի 350 բնակիչների հետ,որից բողոք դիմումները քննարկելով տրվել են համապատասխան լուծումներ:
Համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 144 որոշում և արձակվել է 45 կարգադրություն.Ավագանին կայացրել է 11 ավագանու նիստ,որի ընթացքում ընդունվել է 74 որոշում:
2019թ. ընթացքում համայնքում ծնվել են 45 երեխա որոնց տրվել են 30000 /երեսուն հազար / - ական ՀՀ դրամ օգնություն:
Մահացածների ընտանիքներին տրամադրվել է 50000 /հիսուն հազար/-ական ՀՀ դրամ:
2019թ. ընթացքում սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 100 %
Բարերարի կողմից վերանորոգվել է հայրենական մեծ պատերազմում զոհված համայնքի հուշամրձանի հուշայունը: :
Հանդիսությունների սրահի համար գնվել է 1 հատ սառցարան և 2 օդորակիչ:Կանանց տոնի առթիվ 60-ից բարձր տարիքի կանանց հատկացվել է նվերներ: Դպրոցի շրջանավարտներին վերջին զանգի առթիվ հատկացվել է նվերներ, Հունիս ամսին համայնքից ապրիլյան պատերազմի մասնակից բանակից զորացրված 4 /տղաներ/ ուղղարկվել են հանգստյան տուն: Ցանկապատվել է խմելու ջրի պոմպերի շրջակայքը՝ մետաղյա ցանկապատով և տարածքը խճապատվել է,շահագործման է հանձնվել սուբվենցիայի շրջանակներում վերանորոգված ՝ոռոգման ջրի մեկ խորքային հոր:
2019 թ.մայիսի 6-ին հիմնովին վերանորոգումից հետո վերաբացվել է մանկապարտեզը,որտեղ հաճախում են համայնքի և շրջակա համայնքներից երեխաներ:
Համայնքի խնդիրները՝

Համայնքն ունի մի շարք չլուծված խնդիրներ որոնցից ամենակարևորը փողոցների լուսավորության անցկացումն է, իսկ գեր խնդիրը ոռոգման ցանցի անցկացումն է:

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՂԱՋԱՆՅԱՆ

Արգավանդ համայնքի 2019 թվականի 2-րդ կիսամյակային հաշվետվություն

2020թ. Փետրվարի 4-ին ժամը 12:00 –ին Արգավանդի մշակույթի տանը կայացավ համայնքի ընդհանուր ժողով,որին մասնակցում էին մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա.Թովմասյանը ,համայնքի 45 անդամներ և ավագանու անդամներ

Նախագահությամբ՝ Ա.Աղաջանյանի

Քարտուղարությամբ՝ Ա. Սարգսյանի

Օրակարգում

2019թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

Զեկուցող՝ Ա.Աղաջանյան

Բացման խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավար Ա.Աղաջանյանը և ներկայացրեց 2019թ. 2-րդ կիսամյակի հաշվետվությունը

2019թ. 2-րդ կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները՝ կատարվել են համայնքի 300 բնակիչների ընդունելություններ,որոնց ընթացքում բարձրացված հարցերին օրենքի շրջանակներում տրվել են համապատասխան լուծումներ:Համայնքի ղեկավարի կողմից կայացվել են 85 որոշումներ և արձակվել է 24 կարգադրություն:Համայնքի ավագանու կողմից անցկացվել է 6 ավագանու նիստ որի ընթացքում կայացվել է 35 ավագանու որոշումներ:2-րդ կիսամյակի ընթացքում ծնվել են 25 երեխաներ ,որոնցից յուրաքանչյուրին տրամադրվել է 30000/ երեսուն հազար /-ական ՀՀ դրամ օգնություն,իսկ այդ ընթացքում մահացել են 5 բնակիչ,որոնց ընտանիքներին հատկացվել է 1- ական ծաղկեպսակ և 50000 /հիսուն հազար/ - ական դրամ օգնություն:Կարկուտից և խաղողի վազերի բուժանյութի այրումից տուժածներին տրամադրվել են 30000 /երեսուն հազար/- ական ՀՀ դրամ օգնություն:

2-րդ կիսամյակի ընթացքում կատարվել է համայնքապետարանի և հարակից տարածքների շինարարությունը ,որը վերջնականապես չի ավարտվել շինարարների պատճառով:

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՂԱՋԱՆՅԱՆ